

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

INTRODUCTION

Սույն ժողովածուն պարունակում է ՀՀ աշխատաշուկայի վերաբերյալ ամփոփ վիճակագրական ցուցանիշների ժամանակագրական շարքեր՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ (նան՝ ճշգրտված), որոնք կարող են լուսաբանել ոլորտի փոփոխությունները վերջին տարիներին:

Ընդհանուր առմամբ տեղեկատվությունը ներկայացված է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Երևան քաղաքի, ՀՀ մարզերի, գյուղ-քաղաք կտրվածքով, ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական տարբեր բնութագրերով:

Ժողովածուն հիմնական ցուցանիշների վերաբերյալ ներառում է նաև համառոտ մեթոդաբանական պարզաբանումներ, որոնք հիմնականում համապատասխանում են միջազգային ստանդարտներին:

ՀՀ աշխատաշուկայի զարգացումները ժողովածուում ներկայացված են տարբեր աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա. օգտագործվել են ինչպես պետական վիճակագրական և գերատեսչական հաշվետվությունների, այնպես էլ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքները՝ իրականացված տնային տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում:

Տեղեկատվության հիմնական սպառողներն են պետական կառավարման մարմինները, զիտական, հետազոտական, կրթական հաստատությունները, ՀՀ կենտրոնական բանկը, գործարար հանրությունը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները (Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Եվրոստատ, Համաշխարհային բանկ, Եվրասիական տնտեսական միություն, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, ՄԱԿ և այլն) և վիճակագրական տեղեկատվության այլ սպառողները:

Ներկայացված տվյալները հիմնականում հաշվարկված են միջին տարեկան կտրվածքով:

This handbook encompasses time series of summarized statistical indicators on the Armenian labour market on a monthly, quarterly and annual basis (also adjusted) describing the changes in this sector during the past years.

In general, the information is presented in both nationwide and broken down by Yerevan city, RA marzes, as well as by urban/rural, various demographic and socio-economic characteristics.

The brief methodological explanations on main indicators are provided in the handbook, which are mainly corresponding to the international standards.

Developments in a labour market of RA presented in the handbook are based on the data received from the different sources. References for the handbook were: results of the state statistical and administrative (departmental) reports, as well as findings from labour force sample surveys carried out in a households and commercial enterprises.

The main data users are authorities of public administration, scientific, research, educational institutions, the Central Bank of RA, business community, mass media, international organizations (International Labour Organization, Eurostat, Eurasian Economic Union, World Bank, OECD, UN, etc.), and other users of statistical information.

Presented data mainly were computed by the average annual basis.